



	audit	accounting	advisory	assurance	
Լիցենզիա	ԱՕ 102			License	ԱՕ 102
Հասցե	Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,	www.4aconsulting.am		Address	Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս	+374(10) 52 08 47	info@4aconsulting.am		Telephone	+374(10) 52 08 47

Անկախ աուդիտորի եզրակացություն

"Նոր Սերունդ" Մարդասիրական Հասարակական Կազմակերպության

կառավարման մարմիններին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Նոր Սերունդ" Մարդասիրական Հասարակական Կազմակերպության ՀՀ Կառավարության առընթեր Պետական Եկամուտների Կոմիտեի Նախագահի կողմից 2019թ. փետրվարի 15-ին հաստատված Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունն ձևաչափով կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով 2019թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

Մեր կարծիքով, "Նոր Սերունդ" Մարդասիրական Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2019թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար "Հասարակական Կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար»* բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

Հաշվետվության համար Կազմակերպության ղեկավարության պարտավորությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները և պատասխանատու է օրենքով սահմանված ժամկետում վերը նշված Հաշվետվությունը կազմելու և ներկայացնելու համար:

Աուդիտորի պարտավորությունը աուդիտի համար

Աուդիտի նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

17 փետրվարի 2020թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար

